ԳԼՈՒԽ ՃԹ.

Ամենայն երկիրն հայոց դաշտ և բլուրք, լերինք և անտառք եթէ տէրունի և եթէ սեպհական ժառանգութիւն ամենայն իշխանաց և ժողովրդոց և եկեղեցականաց ամենայն տարուոջ և 'ի պատեհ ժամանակի վարեսցի, ցանեսցէ և պարարտեցուսցէ առ 'ի առատութեան։

ԳԼՈՒԽ ՃԺ.

Ով ոք որ անցուցանէ ժամանակս վարելոյ արտս տնկելով այգիս, ամայի թողուլով երկիրս իւր՝ 'ի կողմանէ տէրունական վարեսցի յերկիրն նորա, եթէ Տէր ագարակին ոչ ելցէ առ 'ի խընդիր ագարակին իւրոյ մինչև երիս ամս ագարակն այն 'ի տունս հայոց գրեսցի։

ԳԼՈՒԽ ՃԺԱ.

Ամենայն դեկտեմբերի ամսոյ ամենայն իշխան 'ի վերայ աշխարհի հայոց համարն աշխարհագրութեան ընութեանս մարդոյ արուի և էգի երիս աստիճանաւ տղայ, երիտասարդ և ալևորի ձեռնագրեալ իւրով ձեռամբ ընծայեսցէ առ տունն հայոց, որ մատուսցի առաջի ատենի տանուտերաց յունվարի մի և մտցէ համարն աշխարհին իւրեանց։